600.0073.20.12.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2001 թվականի № 73
ք.Երևան

«Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության № 0030 և № 0044 գործունեության լիցենզիաների ժամկետները երկարաձգելու մասին

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 30-րդ հոդվածները, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի բ) կետը, 23-րդ հոդվածը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի օգոստոսի 28-ի № 39 և 2000 թվականի հունիսի 7-ի № 11 որոշումներով հաստատված կարգերը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 6-ի №27 որոշման 1-ին կետով սահմանված՝ «Հայէներգո» ՓԲԸ-ի կենտրոնական կարգավարական ծառայության № 0030 գործունեության լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2002 թվականի մարտի 22-ը:

1. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 6-ի №27 որոշման 2-րդ կետով սահմանված՝ «Հայէներգո» ՓԲԸ-ի էլեկտրական էներգիայի արտահանման № 0044 գործունեության լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2002 թվականի մարտի 22-ը:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ ***Վ. Մովսեսյան***